## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

Երևան-0010, Հանրապետության հր. Կառավարական տուն 3

“.......” ........................ 2022թ. N................................

ՀՀ աշխատանքի և սոցիալական
հարցերի նախարար
Ն.Մկրտչյանին

Հարգելի' պարոն Մկրտչյան

Ձեզ ենք ներկայացնում «Սիբիր» ավիաընկերության կողմից արտոնություն ունեցող ՀՀ քաղաքացիներին անվճար և զեղչային սակագներով 2022 թվականի առաջին եռամսյակում ներկայացված մատուցված ծառայությունների ցանկը:

Խնդրում ենք տրամադրել տեղեկատվություն՝ վերոհիշյալ ցանկում ընդգրկված քաղաքացիների կողմից անվճար և զեղչային սակագներով տրանսպորտային ծառայություններից օգտվելու իրավունքի հավաստիության վերաբերյալ:

Քանի որ ներկայացված մատուցված ծառայությունների ծախսի գումարը կազմել է 3,733.669 հազար դրամ, խնդրում ենք մեր 18.03.2022թ. թիվ ԳՍ/23.1/6547-2022 գրությամբ ՀՀ 2023-2025 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի և ՀՀ 2023 թվականի պետական բյուջեի նախագծերի մշակման շրջանակներում՝ «Սոցիալական ապահովություն» (1205) ծրագրի «ԱՊՀ տարածքում Հայրենական մեծ պատերազմի հաշմանդամների և մասնակիցների օդային տրանսպորտով մատուցվող ծառայությունների դիմաց փոխհատուցում» (12008) միջոցառման գծով ներկայացված 2,000.0 հազար դրամի փոխարեն նախատեսել 2022 թվականի համար հաստատված 4,735.0 հազար դրամի չափով:

Միաժամանակ հայտնում ենք, որ ՀՀ 2022 թվականի պետական բյուջեի առաջին կիսամյակով հատկացված գումարը չի բավարարում վերոնշյալ գումարի վճարումն իրականացնելու համար: Ուստի խնդրում ենք եռամսյակների միջև վերաբաշխում կատարելու միջոցով առաջին կիսամյակի պլանը ապահովել 3,733.7 հազար դրամ գումարի չափով:

Առդիր՝ էլ.նյութ:

3/31/2022

X 

ԳՆԵԼ ՍԱՆՈՍՅԱՆ

Հարգանքով՝ Signed by: SANOSYAN GNEL 1710830069

Գ. Սանոսյան

Կատարող՝ Գայանե Բադալյան
Ֆինանսական, հաշվապահական հաշվառման
և համայնքային բյուջեների վարչություն
Հեռ.՝ 010 511-351